ՄԱՐԳԻՆԱԼՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ. «ԳՈՒՆԱՎՈՐ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Մարիամ Մարգարյան
Արաքսյա Մուրադյան

Քաղաքական համակարգի ժողովրդավարացումը ՀՀ-ում ընթանում է հասարակության արմատական կերպափոխումների պայմաններում, որը ենթադրում է շարունակական բարեփոխումներ, էթնիկ ինքնության բնականոն արդիականացում և համագործակցության մշակույթի հաստատում՝ հանուն սոցիալական երկխոսության և սերունդների համերաշխության: Այս նպատակով ՀՀ-ում ընտրական գործընթացներն անհրաժեշտ է կազմակերպել «անցում-համախմբում» գիտավերլուծական պարադիգմի օգնությամբ, որը բարձրացնելով ժողովրդավարության որակը՝ մի կողմից կկանխի հասարակության մարգինալությունը, մյուս կողմից՝ կմեկնարկի ժողովրդավարական համախմբման գործընթացը: Այլապես ցանկացած ընտրությունից հետո հեղափոխականացված զանգվածները տարաբնույթ ընդվզումների, խռովությունների և նույնիսկ «գունավոր հեղափոխությունների» դրոշ կարող են պարզել: Մինչդեռ Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի, ԿԱԵ (Կենտրոնական Արևելյան Եվրոպա) և ՆԽՄ (Նախկին Խորհրդային Միություն) քաղաքական արդիականացման փորձը վկայում է, որ քաղաքական համակարգն իրապես ժողովրդավարացվում է միայն «անցում-համախմբում» գիտավերլուծական պարադիգմի օգնությամբ: Վերջինս հնարավորություն է տալիս ընտրությունների միջոցով առաջին սերնդի «նոր ժողովրդավարներին», որոնց կառավարման ժամանակ երկիրն ընկղմվել է քաղաքական զարգացման ճգնաժամերի մեջ, փոխել երկրորդ սերնդի «նոր ժողովրդավարներով»՝ պատասխանելով ժամանակի մարտահրավերներին: Հետևաբար, հայ «Ես»-ի ինքնակազմակերպվելու, ինքնահաստատվելու ու ինքնաիրացվելու նկատառումներով անհրաժեշտ է, որ երկրորդ սերնդի «նոր ժողովրդավարները» իրականացնեն այնպիսի բարեփոխումներ, որոնք հնարավորություն կտան գլոբալ քաղաքակրթության մեջ պահպանել հայերիս ուրույն տեղը, դերը և տեսակը. լինել ամբողջի մասը՝ ազգային ինքնությամբ:

1. Մարգինալությունը որպես համաշրջական երևույթ. մարգինալ անձը «գունավոր հեղափոխությունների» կրող և արարող

Մարգինալությունն ուսումնասիրող հոգեբաններից, քաղաքագետներից, սոցիոլոգներից յուրաքանչյուրն այն դիտարկում է երկու հիմնական իմաստով. 1) մարգինալ է այն ամենը, ինչը գտնվում է ընդունված կառուցվածքների, նորմերի սահմաններից դուրս, 2) մարգինալ է այն, ինչը գտնում է երկու և ավելի իրողությունների միջակայքում: Այս երկու մոտեցումների միջև գոյություն ունեցող էական տարբերություններն էլ առավել քան ակնհայտ են դարձնում

այն, որ մարգինալությունը՝ որպես կերպափոխվող իրականության քաղաքական գործընթացի բաղկացուցիչ, անհրաժեշտ է ուսումնասիրել ոչ միայն սոցիոմշակութային և էթնոմշակութային արժեհամակարգի արդիականացման համատեքստում, այլ որպես համադրական (սինթետիկ) երևույթ: Որպես այդպիսին մարգինալությունը[1] մշտապես ուղեկցում է տարբեր հասարակություններին, սոցիալական խմբերին, էթնիկ միավորումներին քաղաքական զարգացման գործընթացում: Ահա թե ինչու կերպափոխվող հասարակությունների քաղաքական համակարգերի ժողովրդավարացման գործընթացներն ուսումնասիրող տեսաբաններ Խ.Լինցը, Գ. Օ'Դոնելը, Ֆ.Շմիտերը, Տ.Կարլը, Ա.Պշևորսկին, Ս.Հանթինգթոնը, Ռ.Դալը, Դ.Ռաստոուն և այլք կարևորում են հասարակական այն տարածությունները, որտեղ առավել համակարգված գործունեություն են ծավալում մարգինալները՝ հարահոս կերպափոխելով իրենց «Ես»-ը նոր և հին արժեքների հանդիպման տիրույթներում:

Դեռևս 70 տարի առաջ, 1928թ. Ռ.Պարկը (1864-1944), առաջին անգամ շրջանառության մեջ դնելով «մարգինալ մարդ» հասկացությունը, այդպիսին էր համարում երկու տարբեր մշակույթների, սոցիալական կառուցվածքների սահմանագծում հայտնված այն մարդուն, որը լիարժեքորեն ներառված չէ ոչ մեկի և ոչ էլ մյուսի մեջ [1, p. 881-883]: Վերլուծելով հեղափոխական, կերպափոխման և միգրացիոն երևույթները՝ Ռ.Պարկը վատատեսորեն է վերաբերվում մշակութային խառնածիններին ոչ թե այն պատճառով, որ արժեքային անցման մեջ գտնվող մարգինալը չի կարող կտրվել իր անցյալից և ադապտացվել նոր մշակութային միջավայրում, այլ այն պատճառով, որ հնարավոր չէ միշտ մնալ սահմանագծում. անհրաժեշտ է կողմնորոշվել: Ռ.Պարկի համար գոյություն չունի երկու կամ ավելի սոցիալականություն, սոցիալականությունը մեկն է, ուստի, դրանում տեղ չկա մարգինալության համար, քանի որ նրա առկայությամբ հնարավոր չէ ժողովրդավարական համախմբում իրականացնել՝ պահպանելով շարունակական բարեփոխումների տրամաբանությունը:

Ելակետ ընդունելով Ռ.Պարկի հայացքները՝ Է.Սթոունքվիստը մարգինալ մարդուն դիտարկում է որպես այնպիսի սոցիալական սուբյեկտ, որը, ճիշտ է, գտնվում է երկու մշակույթների սահմանագծում, սակայն իր «Ես»-ի ինքնության բնականոն արդիականացման նկատառումներով հակված չէ երկխոսության: Արդյունքում՝ «մշակութային խառնածնություն» կրող և արարող *սոցիալական, քաղաքական, հոգեբանական, ինտելեկտուալ և զգացմունքային* պարբերական փոխակերպման մեջ գտնվող մարգինալ մարդու վերաճումը քաղաքացու տևում է շուրջ 20 տարի: Այս նկատառումներով Է.Սթոունքվիստն ուսումնասիրել է

[1] *Մարգինալ* - լատ. *margo*-սահման, ծայր, իսկ *marginalis* - ծայրամասում, սահմանագծում գտնվող: Անգլերենում մարգինալ *(marginal)* բառն ունի մի քանի նշանակություն. ա) լուսանցքում գրված, բ) ծայրամասում գտնվող, գ) ծայրահեղ, սահմանային, դ) նվազագույն, հազիվհազ բավարարող, ե) աննշան, աննկատելի, զ) սահմանագծային, միջանկյալ, անցումային վիճակում գտնվող:

մարգինալ մարդուց դեպի քաղաքացու բնաշրջման երեք փուլ: *Առաջին փուլում* մարդն աստիճանաբար յուրացնելով գերիշխող խմբի մշակույթը՝ հրապուրվում է նրանով: *Երկրորդ փուլում* մարդը գիտակցում է բախման տրամաբանությունը. արագորեն փոխելով իրեն՝ ինքնորոշվում է: *Երրորդ փուլում* մարգինալ մարդը հաջող կամ անհաջող փորձեր է կատարում հարմարվելու բախումնային իրավիճակին: Հաջողության դեպքում նա դուրս է գալիս մարգինալ վիճակից՝ դառնալով քաղաքացի, իսկ անհաջողության դեպքում օտարվում է իրականությունից [2, p. 92-93]: Այս ճշմարտության իմացությամբ է, որ ժողովրդավարացման «երրորդ ալիքի» տեսաբանները կերպափոխվող հասարակություններում արմատական ազատականացման արդյունքում առաջացած անորակ ժողովրդավարություններից ազատվելու նկատառումներով տարաբնույթ խռովությունների, ըմբոստությունների, ահաբեկչությունների հորձանուտ ներքաշված մարգինալներին դարձնում են «գունավոր հեղափոխություններ» խաղի կրողներ և արարողներ [3, 4]:

Տեղեկատվական դարաշրջանն, արմատապես կերպափոխելով սոցիո- և էթնոմշակութային տարաբնույթ նորմեր, ստեղծել է արժեշահային բազմաչափություն ենթադրող նոր աշխարհ՝ հաճախ վիրտուալ: Այս նկատառումներով անհրաժեշտություն է առաջացել վերանայել անձի սոցիալական դերակատարումը, քանի որ արմատական կերպափոխությունները հաճախ *ֆրուստրացիաների*[1] պատճառ են դարձել, որի պայմաններում անկանխատեսելի ընթացք են ստանում հարաբերական անկախության մեջ գտնվող անձի բազմաշերտ ու բազմաբովանդակ Ես-պատկերներն ու վարքագիծը: Արդյունքում՝ մարգինալությունը համադրական բնույթ և էություն է ստացել, որի տիրույթներում հայտնված անձը ցանկանում է նախ պարզել, թե էթնոմշակութային և սոցիոմշակութային համակարգերն ինչպես են փոխհարաբերվում, ապա ինչ գործոնների ազդեցությամբ ինքը կարող է օգուտ ստանալ այդ վիճակից՝ հաղթահարելով օտարվածությունը, ֆրուստրացիաները, սթրեսը, անոմիան և բացառելով հակասոցիալական ագրեսիվ գործողությունները:

Կերպափոխվող հասարակություններում տարբերակելով մարգինալության առաջացման արտաքին և ներքին պատճառները՝ կարծում ենք, որ այն տվյալ հասարակությունում առկա ավանդական, մոդեռն և պոստմոդեռն արժեքների կրող սոցիալական խմբերի միջև թույլ արտահայտված սոցիալական

[1] *Ֆրուստրացիա* (լատ. *frustratio*) - անհաջողություն, զուր հույսեր, հիասթափություն, որը՝ ա) հասարակության, ազգերի, սոցիալական խմբերի, անձի սոցիալ-հոգեբանական վիճակ է՝ պայմանավորված քաղաքական նպատակների նվաճման կամ քաղաքական խնդիրների իրագործման ճանապարհին առաջացած անհաղթահարելի դժվարություններով, բ) քաղաքական անհաջողության սթրեսային իրավիճակ է, որն ուղեկցվում է ցասումի, գրգռման, ապագայի զարգացման անորոշության համար ունեցած վախի զգացումով: Ֆրուստրացիայի մակարդակը պայմանավորված է այն ծնող պատճառների համակարգից, ինչպես նաև ճգնաժամերի հաղթահարմանն ուղղված անձի այն էներգիայից, որը կարող է հաղթահարել կյանքի դժվարությունները:

երկխոսության, սերունդների համերաշխության, իշխանության իրականացման ցածր մշակույթի և անհանդուրժողականության արդյունք է:

Մարգինալությունը դիտարկելով որպես արտագաղթի (ներգաղթի), մշակութային խառնածնության, աղքատության ու գործազրկության, քաղաքական իրավազրկության, բազմաչափ կերպափոխումների հետևանք՝ Ռ.Պարկը գրում է. «Անկասկած, բոլորի կյանքում էլ ճգնաժամեր կան, սակայն անհրաժեշտ է տարբերակել այն ճգնաժամերը, որոնք ունեն ուրիշ երկրներում բախտ փնտրող արտագաղթածները: Միևնույն ժամանակ, ճգնաժամեր կարելի է ունենալ սեփական երկրում՝ լինելով գործազուրկ, օտարված և հանրորեն մերժված, մարգինալ մարդ, որը ոչ միայն չգիտի ինչպես վերաբերվել իր ժամանակի հետ, այլև չգիտի, թե ինչպես հարաբերություններ ստեղծել այն տարածքներում, որտեղ կարող է ինքը ինքնադրսևորվել» [5]: Ճիշտ է, մարգինալ մարդու կերպարը վերլուծելիս Ռ.Պարկն օգտագործում է հստակ արտահայտված հոգեբանական արտահայտություններ, սակայն մարգինալության իր հայեցակարգը Ռ.Պարկը պայմանավորում է հասարակական-քաղաքական գործընթացներով: Ուշադրություն դարձնելով այս հանգամանքին՝ Տ.Շիբուտանին մշակում է մարգինալության հատկանիշների համակարգը, համաձայն որի՝ մարգինալ են արդարության հիվանդագին զգացում և ամբիցիաներ ունեցող մարդիկ, որոնք գիտակցորեն իրենց զատում են շրջապատից՝ ցանկանալով գերիշխել նրա վրա [6, c. 475]: Համաձայն ամերիկացի տեսաբան Բ.Մանչինիի՝ մարգինալությունն անհատի զբաղեցրած *ստատիկ* և *դինամիկ* վիճակների արդյունք է: Եթե առաջինը որոշակի մշակութային և սոցիալական կառուցվածքում զբաղեցրած դիրքով է պայմանավորված, ապա երկրորդը կապված է անհատի նոր դերակատարում ստանձնելու գործընթացի հետ: Հենց այս հանգամանքն էլ նկատի ունենալով կարող ենք փաստել, որ մարգինալ մարդը, լինելով բազմաչափ արժեշահային համակարգի կրող, վերջինիս կերպափոխման գործընթացում հնարավորություն ունի տարաբնույթ դերեր խաղալ և ստանձնել: Վերոբերյալը կարող ենք հաստատել՝ ելակետ ընդունելով Բ.Մանչինիի առաջարկած այն դրույթները, համաձայն որոնց՝ մարգինալությունը հաղթահարելու համար անհրաժեշտ է հաշվի առնել *իրադրության և՛ փոփոխության, և՛ արժեքայնության, և՛ տեսանելիության հնարավորությունների ընկալման անձի (որպես դերակատարի) ընդունակությունները* [7, p. 2]: Իսկ Դ.Օլշանսկու կարծիքով՝ «Հաճախ մարգինալություն հասկացությունը նշանակում է սոցիալական ենթախմբերի ներկայացուցիչների գիտակցության և վարքագծի գծերի համախմբությունը, որոնք այս կամ այն հանգամանքների շնորհիվ ի վիճակի չեն ինտեգրվել մեծ ռեֆերենտային հանրույթներում» [8, c. 310]:

Վերոշարադրյալից կարելի է եզրակացնել, որ մարգինալությունն արժեշահային բազմաչափության, սոցիալական բևեռվածության ու էթնիկական

խտրականության, անձի օտարվածության, ինքնահաստատվելու այլընտրանքային ուղիների դերային անորոշության արդյունք է: Իրավիճակով պայմանավորված *ներքին* և *արտաքին* փոփոխությունները, մարտահրավեր նետելով սոցիալական Ես-երին, մղելով նրանց մարգինալության տիրույթ, թաքնահարույց դիրքավորվելու հնարավորություն են տալիս և անկանխատեսելի են դարձնում քաղաքական զարգացման գործընթացում նրանց ստանձնած դերի իրատեսության մակարդակը: Որպես այդպիսին վերջինս արդյունք է՝ ա) ռեֆերենտային խմբում անձի ինտեգրվելու կամ սպասվելիք կարգավիճակ ունենալու անհաջողությունների՝ «սպասումների հիասթափության», բ) սոցիալական դերերի իրականացման ժամանակ առաջացած անհանդուրժողականության, գ) սոցիալական խմբերի՝ մարգինալ իրավիճակում իրականացրած այնպիսի գործունեության, որը չի համապատասխանում նրանց սոցիալական ամբիցիաներին: *Հասարակության արժեշահային համակարգի այնպիսի բազմաչափությունը, որը տրոհելով մեծացնում է քաղաքական գործընթացի անորոշությունները և հնարավորություն չի տալիս հասարակությանը համախմբվել հանուն ժողովրդավարական կայունության և ազգային անվտանգության, կոչվում է մարգինալություն:*

Ակնհայտ է, որ մարգինալությունը՝ որպես համադրական երևույթ, կոնկրետ սոցիալական իրականությունում գտնվող ինքնահաստատման, ինքնադրսևորման, ինքնաիրացման ձգտող «Ես»-երի առկայության արդյունք է: Առանց այդ «Ես»-երի՝ հասարակությունը մի կողմից դժվարությամբ կհաղթահարի քաղաքական համակարգի արդիականացումը, մյուս կողմից՝ անհնարին կլինի ժողովրդավարական կայունություն ապահովել: Ուստի, *սոցիալական և մշակութային (էթնոմշակութային)* մարգինալության տիպերը, ճիշտ է, կերպափոխվող հասարակություններում հարաբերականորեն անկախ են միմյանցից, սակայն անհրաժեշտ ենք համարում դրանք դիտարկել համակարգային ամբողջության մեջ:

Սոցիալական մարգինալությունը ձևավորվում է կերպափոխությունների գործընթացում առաջացած այն նոր արժեշահային տիրույթների սահմանագծում, որն արմատապես փոխում է անձերի, սոցիալական խմբերի ու հանրույթների կարգավիճակը: Բազմաչափ փոփոխությունների հորձանուտ ներքաշված էթնիկական, սոցիալական, մշակութային, տնտեսական, քաղաքական մարգինալություն կրող և արարող խմբերը, արագորեն փոխելով իրենց սոցիալական տարածությունը, ոչ միայն անկայունություն, այլև անորոշություն են ստեղծում քաղաքական զարգացման գործընթացում: Լինելով համադրական երևույթ՝ մարգինալությունը հատուկ է բոլոր հասարակություններին, սակայն որոշիչն այստեղ այն ունիվերսալ արժեքների առկայությունն է, որի օգնությամբ ընդարձակվում է հանրային և քաղաքական կառավարման

սոցիալական բազան: Եթե խորհրդային տարիներին մարգինալ էին համարվում մի կողմից սոցիալական այն խմբերը, որոնք, լքելով գյուղը, ճիշտ է, ստանում էին մասնագիտական կրթություն, սոցիալական կարգավիճակ, հասարակական գործառույթներ և անդամագրվում էին բազմազգ համամիութենական կառույցներին («Խոպան հողերի մշակում», «Բրատսկի ՀԷԿ», «ԲԱՄ» և այլն), սակայն մենթալիտետով մնում էին գեղջուկ, մյուս կողմից՝ հանուն քաղաքական կայունության սոցիալիստական պետությունը նման գործընթացներում սակավ մասնակցություն ունեցողներին հնարավորություն էր տալիս օգտվել սոցիալական ֆոնդերից՝ ստանալով նաև ժամանակի պահանջներին համահունչ մրցունակ կրթություն [9]: Մինչդեռ ազատականության արժեշահային համակարգի հաստատման նկատառումներով տեղի ունեցող կերպափոխման գործընթացները, նեղացնելով սոցիալական հենքը, մեխանիկորեն դուրս են մղում բոլոր նրանց, ովքեր չկողմնորոշվելով ազատ շուկայական հարաբերությունների շրջանակներում կերպափոխվելու բազմաչափ գործընթացում՝ օտարվում են սոցիալական իրականությունից և մղվում չնորմավորված վարքաբանության հորձանուտ: Այս նկատառումներով ուշագրավ է Պ.Սորոկինի այն մոտեցումը, որը մարգինալությունը դիտարկում է հանցավորության և սոցիալական կյանքի այլ բացասական երևույթների համատեքստում [10, c. 779-780]: Անկասկած, մարգինալությունը զարգացած և զարգացող հասարակություններում հանցագործություն ծնող պատճառներից մեկն է, սակայն միջմշակութային և միջսոցիալական բազմաչափ տարածություններում էականը ոչ այնքան նշված երևույթների փոխկապակցվածության աստիճանի վիճակագրությունն է, որքան այն վերացնելու մերիտոկրատական էլիտայի կամքը [11, c. 57-58]:

Մշակութային (էթնոմշակութային) մարգինալությունը անհատի, խմբի, հանրույթի այնպիսի վիճակ է, երբ նրանք, ներառված լինելով հասարակության կերպափոխման գործընթացների մեջ, միևնույն ժամանակ հաստատվող մշակութային արժեքների նկատմամբ ցուցաբերում են սահմանային վերաբերմունք: Հայեցակարգային առումով ուսումնասիրելով մշակութային (էթնոմշակութային) մարգինալությունը՝ Ռ.Պարկը կարևորեց բազմէթնիկ հասարակությունների մեջ էթնիկական բախումների ծագումնաբանության մշակութային հենքը: Համաձայն Ռ.Պարկի՝ մարգինալ մարդը մարդու այն տիպն է, որը բացահայտվում է այն ժամանակ և այն տեղում, որտեղ ռասաների և մշակույթների բախումներից ձևավորվում են նոր համակեցություններ, ժողովուրդներ, մշակույթներ: Ճակատագիրն այդպիսի մարդկանց հնարավորություն է տալիս ինքնահաստատվել երկու աշխարհներում միաժամանակ, կամ էլ մերժել այդ աշխարհները՝ մնալով իր «ջունգլիում» [1, p. 355-356]: Նման մարգինալության կրող է օտարականը *(օտարական մարգինալ),* որը տվյալ սոցիումի մեջ ներ-

գրավվելու նկատառումներով մշակութային առումով կամ չեզոք է, կամ ագրեսիվ, կամ օտարված, կամ էլ հակված է մշակութային երկխոսության: Այս առումով ուշագրավ է գլոբալ հաղորդակցական տարածություններում ձևավորված ժամանակակից սփյուռքը, որը, պահպանելով իր շփումները «պատմական հայրենիքի» հետ, ինքնահիրացվում է անդրազգային ցանցերի միջոցով՝ ինքնաարդիականացնելով իր էթնիկ արժեշահային համակարգի քաղաքական էությունը: Ժամանակակից սփյուռքի ցանցային կառուցվածքով էլ պայմանավորված՝ էթնոմշակութային մարգինալությունը, որպես հաղորդակցական գործունեության առանձնահատուկ ձև, դրսևորվում է եռաչափության մեջ՝ *«սփյուռք-պատմական հայրենիք», «սփյուռք-որդեգրված հասարակություն», «սփյուռք-միջազգային (միջկառավարական) կազմակերպություններ»* [12, c. 168]: Այս եռաչափության մեջ էթնոմշակութային մարգինալության մեջ գտնվող սոցիալական խմբերը հնարավորություն են ստանում առնչվել իրենց էլիտաների և բոլոր այն ակտիվիստների հետ, որոնք միավորում են տվյալ էթնոսի անդամների տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքական կյանքը «նոր տարածություններում»՝ ստեղծելով ոչ միայն համախմբման նպաստավոր պայմաններ, այլև հնարավորություն ինքնահիրացվելու աշխատանքի միջազգային նոր բաժանման պահանջներին համապատասխան: Այդ առումով ուշագրավ են ժամանակակից համաշխարհային ամենամեծաթիվ սփյուռքի՝ չինացիների ներէթնիկական արդյունավետ հաղորդակցման սկզբունքները, որի արդյունքում 30 միլիոնանոց չինական սփյուռքի համախառն ներքին արդյունքը կազմում է ավելի քան $2 տրիլիոն [13, c. 47]:

Այսպիսով, էթնոմշակութային մարգինալությունը գլոբալ հաղորդակցական տարածություններում իրականության արժեշահային, մշակութային և հոգեբանական ընկալումների արդյունք է, որը կարող է և՛ բախումների, և՛ բանակցությունների հիմք հանդիսանալ: Փաստորեն, գլոբալացման պայմաններում ընթացող կերպափոխումների համատեքստում կարելի է լրացնել (կամ վերանայել) Ռ.Պարկի այն մոտեցումը, համաձայն որի՝ սահմանային կարգավիճակում գտնվող երկու տարբեր արժեշահային համակարգերից որևիցե մեկն անկում է ապրում: Մինչդեռ, գլոբալ հաղորդակցական տարածությունների ընդարձակման հետևանքով մարգինալությունն այսօր տարաբնույթ սոցիոմշակութային փորձի սահմանագծերում կարող է լինել մի կողմից «Ես»-ի *բախումնածին մենախոսության,* մյուս կողմից էլ՝ *հանդուրժողական երկխոսության* միջոցով նրա *ինքնակերպափոխման* և *ինքնաարդիականացման* արդյունք:

2. Քաղաքական զարգացման արժեքային կողմնորոշիչները և մարգինալությունը. քաղաքական համակարգի արդիականացումը ՀՀ-ում

Քաղաքական զարգացմանը բնորոշ են՝ 1) քաղաքական համակարգի *արդիականացում՝* բազմատեսակ ինստիտուտներով և դերակատարներով, 2) ժողովրդավարական քաղաքական համակարգի *կայացում,* ինչը ենթադրում է ինստիտուտների բնականոն գործունեություն, 3) հասարակական բոլոր խավերի պարբերական *ներգրավում* քաղաքական իշխանության մեջ, 4) համակարգի արդիականացման գործընթացում նախկին ավանդական էլիտայի *(ավանդական մարգինալներ)* դուրսմղում, 5) իշխանության լեգիտիմության առկայության պայմաններում կառավարողների կողմից կառավարվողների նկատմամբ *պատասխանատվության բարձրացում:* Փաստորեն, քաղաքական զարգացումը *մարտահրավեր է,* որին յուրաքանչյուր հասարակություն *պատասխանում է* իր արժեքային համակարգի և քաղաքական գիտակցությանը համապատասխան ընտրությունների ինստիտուտի *ձևավորման, կայացման և կազմակերպման* միջոցով:

Ընտրությունները՝ որպես քաղաքական զարգացման ինստիտուտ, անհատի համար ստեղծում են մի դեպքում ինքնորոշվելու *(ինքնորոշված մարդ),* մյուս դեպքում՝ մարգինալացվելու *(մարգինալ մարդ)* հնարավորություններ: Ընտրությունների ինստիտուտը, հանդիսանալով արդյունավետ ժողովրդավարացման ցուցանիշ, նվազեցնում է մարգինալությունը և նպաստավոր պայմաններ ստեղծում քաղաքական համակարգի արդիականացման համար [14, c. 50-94]: Ուստի, ՀՀ քաղաքական համակարգի արդիականացման նկատառումներով ընտրական գործընթացներն ուսումնասիրելու համար ելակետ ենք ընդունել հետևյալ սկզբունքները՝

1. կերպափոխվող հայ իրականությունում հաստատված նոր ժողովրդավարական ավանդույթների բնույթը *homo sovetikus* հային արդեն ազատական-ժողովրդավարական արժեքների հասունության մակարդակի և պատմականության իրատես գնահատման հնարավորություն է ընձեռում,
2. մեծ է արտաքին միջավայրի դերը ներքին կերպափոխումներին ներազդելու գործում,
3. առկա է ոչ ժողովրդավարական (կոնսենսուսային օլիգարխիկ) կառույցների խարխլման և փլուզման գործընթացին հակադրվելու միտումը,
4. խախտված են քաղաքական և տնտեսական էլիտաների ժողովրդավարական ռեկրուտացիայի և սելեկցիայի սկզբունքները,
5. չեն պահպանվում նոր ժողովրդավարական ինստիտուտների կառուցման, հաստատման, բնականոն արդիականացման մեխանիզմները,

6. քաղաքական դերակատարների ռազմավարությունն ու մարտավարությունն ունեն պոպուլիստական և մարգինալ բնույթ, քանի որ նրանց անհատական և հոգեբանական առանձնահատկությունների, ընտրությանը մասնակցելու նպատակների և շահերի իրականացման նկատառումներով մասսաների գիտակցությունը մանիպուլացվում է:

Քաղաքական զարգացման դինամիկայով պայմանավորված՝ արդի գլոբալ քաղաքականությունն այսօր ներկայացնում է երկու տեսակ (զարգացած-զարգացող) հասարակությունների համագործակցություն: «Ես»-ի բնականոն զարգացման փիլիսոփայության վրա հիմնված *քայլող արդիականացումը* բնորոշ է այն հանրույթներին, որոնք քաղաքական զարգացում են ապրել՝ Վերածննդի, Ռեֆորմացիայի, Լուսավորչականության արժեքների և արդյունաբերական առաջին հեղաշրջման գործընթացներում՝ հաստատելով սոցիալական, իրավական պետություն և քաղաքացիական հասարակություն:

Վազող արդիականացումը վերագրվում է լատինաամերիկյան, աֆրիկյան, ասիական այն հանրույթներին, որոնք նախընտրում են իրենց կենսաձևը և կյանքի որակը կերպափոխել՝ մեխանիկորեն ընդօրինակելով հանրային կառավարման արևմտյան փորձը:

Այսօր արդեն, հանրագումարելով XX դարի 50-ականներից մեկնարկած քաղաքական զարգացման փորձը, Ս.Հանթինգթոնը, Շ.Էյզենշտադը, Ռ.Դալը, Հ.Ալմոնդը, Ֆ.Ֆուկույաման խոսում են *«արդիականացման սինդրոմի», «փակուղային արդիականացման», ինչպես նաև «մարգինալ արդիականացման»* մասին, որոնք հակասական ներգործություն են թողնում կերպափոխվող հասարակության քաղաքական համակարգի արդիականացման վրա: Այդ երկրներում առկա տնտեսական և քաղաքական անկայուն իրավիճակը վկայում է, որ պատրաստի մոդելների հանպատրաստից ներդրումը որևէ հասարակության սոցիալ-պատմական ենթատեքստում (որը չի հասցրել արդիականանալ սեփական արժեհամակարգի հաշվին), անհամատեղելիություն առաջ բերելով տվյալ հանրույթի անցյալի, ներկայի և ապագայի միջև ստեղծում է և՛ պատահականության, և՛ քաոսի, և՛ մարգինալության մեծ հնարավորություններ [15, c. 68-69, 16, c. 147]: Փաստորեն, ազատականացման գործընթացն ուղեկցվում է տիպաբանորեն իրար հակադիր արժեքների բախմամբ, որն էլ հանգեցնելով փոխադարձ անհանդուրժողականության՝ հասարակական գիտակցության մեջ մեծացնում է մարգինալությունը: Այստեղից էլ՝ մարգինալ արժեքների որդեգրման համատեքստում գործառվող ռացիոնալը «վազող արդիականացնող» երկրներում չի գործում որպես ավանդական արժեք: Պարբերաբար կերպափոխման ենթարկվող քաղաքացիները կամ ադապտացվում են նոր քաղաքական արժեշահային համակարգին, կամ էլ օտարվելով սոցիալական և քաղաքական իրա-

կանությունից՝ նպատակամետորեն մարգինալացնում են իրենց վարքը: Այս ամենի կանխման նպատակով, 1990-ական թվականներից սկսած, «նոր ժողովրդավարների» քաղաքական համակարգերի ժողովրդավարացման հիմնախնդիրներն սկսեցին դիտարկվել քաղաքական մարգինալացման հաղթահարման տեսանկյունից: Ելակետ ընդունելով Ռ.Դալի մշակած պոլիարխիայի տեսությունը՝ ըստ այդմ էլ գործառնության մեջ դրվեց երկու չափանիշ [17, c. 428].

- Ժողովրդավարական ընտրությունների ճանապարհով մրցունակ կառավարող ընտրախավի հավաքագրում և լիդերի կայացում,
- ներկայացուցչական ժողովրդավարության սկզբունքների վրա հիմնված բնակչության լայն զանգվածների մասնակցություն քաղաքական որոշումների ընդունման գործընթացին: Նշված սկզբունքների իրականացումը հնարավորություն է տալիս կանխատեսել իրականացվող բարեփոխումների ելքը, որը կարող է արդյունավետ լինել, եթե.
- բարեփոխումների իրականացման տրամաբանությունը հետևողական լինի, ապա ճգնաժամերը նվազելով՝ կբարձրացնեն ժողովրդավարության որակը,
- իրականացվող բարեփոխումների արդյունքում անցկացվեն ժողովրդավարական ընտրություններ, ապա նոր հավաքագրված էլիտան ոչ միայն պատասխանատվություն կկրի իր իրականացրած քաղաքականության համար, այլև պատրաստ կլինի երկրորդ սերնդի «նոր ժողովրդավար» բարեփոխիչ լիդերի հաղթանակն ապահովել ընտրություններում:

Միայն այս «եթե»-ները նկատի առնելով ՀՀ-ում ժողովրդավարական ընտրությունների միջոցով հավաքագրված էլիտայի և լիդերի կողմից նոր սերնդի բարեփոխումները կիրականացվեն՝ զուգամիտելով ազգային և հանրային շահերը: Միաժամանակ պետք է հաշվի առնել, որ այս գործընթացը ենթադրում է նաև *քաղաքականապես չեզոք բյուրոկրատիայի* սկզբունքի առկայություն, որը ՀՀ-ում նպատակահարմար է իրականացնել ժողովրդավարացվող քաղաքական համակարգի հետևյալ գործառույթներով.

- վարչական ապարատի վերապատրաստում և նորարարական գիտելիքների յուրացում,
- կառավարման ապարատի իրավունքներն ու պարտականությունները կարգավորող կանոնների և ընթացակարգի մանրամասն մշակված օրենսդրական համակարգի ստեղծում,
- ապակենտրոնացման միջոցով ինքնակառավարման ինստիտուտների արդյունավետության ապահովում՝ համայնքների, անհատների և կազմակերպությունների մակարդակով,

- տարաբնույթ արժեշահային համակարգ ունեցող սոցիալական խմբերի միջև սոցիալական երկխոսության և համագործակցության մշակույթի հաստատում,
- քաղաքական էլիտայի, լիդերության և բյուրոկրատիայի ինստիտուտների գործառույթների հստակեցման նկատառումներով օրենսդրական դաշտի շարունակական բարեփոխումների իրականացում:

Վերջիններս էլ հնարավորություն կտան ոչ միայն բյուրոկրատիային «ազատագրել» քաղաքական վերահսկողությունից, այլև քաղաքական համակարգը ձերբազատել ոչ ժողովրդավարական ընտրությունների արդյունքում հավաքագրված կառավարող խավից՝ բարձրացնելով ՀՀ քաղաքացիների քաղաքական գիտակցությունը: Ելակետ ունենալով ՀՀ նախագահական և խորհրդարանական ընտրությունների փորձը՝ աներկբա կարող ենք եզրակացնել, որ ՀՀ-ում անհատի գիտակցությունը կողմնորոշված է դեպի մարգինալ ավանդական արժեքները: Թեև անհատը մասնակցում է քաղաքական կյանքին, սակայն այդ մասնակցությունը չի համարվում նրա կողմից քաղաքական նպատակի ակտիվ ընտրության հետևանք և, ըստ էության, ներկայանում է որպես քաղաքականից դուրս գործունեություն՝ թելադրված վախի, շահի և այլ գործոններով:

Քաղաքական զարգացման գործընթացները ՀՀ-ում, ներառելով *ավանդական և արդիական մշակույթներ,* կողմնորոշված չեն դեպի ընտրության ազատությունը, մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները: ՀՀ-ում քաղաքական համակարգի արդիականացման համար առկա են հետևյալ հիմնախնդիրները.

- ժողովրդավարական քաղաքական մշակույթի համապարփակ բնույթի ընդունումը և քաղաքական գործունեության սահմանների ու հնարավորությունների մշակումը,
- ավանդույթների նկատմամբ վերաբերմունքի հստակեցումը, քանի որ հանրային կառավարման համակարգը, բացառելով իր անցյալը, չի կարող արդյունավետ ժողովրդավարացվել առանց ներկայի և ապագայի,
- քաղաքական համակարգում գոյություն ունեցող դերերի արդյունավետ օգտագործելու հարցում անվստահության հաղթահարում:

Այս սկզբունքների առկայությունը ժողովրդավարացվող քաղաքական համակարգին հնարավորություն է տալիս նմանօրինակ մշակույթի օգնությամբ հետևողականորեն իրականացնել անձի քաղաքական սոցիալականացում: Գաղտնիք չէ, որ քաղաքացու ներգրավումն ընտրական գործընթացներին իրականացվում է իշխող մշակութային կողմնորոշիչների և նորմերի, քա-

ղաքական վարքաբանության նմուշների և արժեքների յուրացման գործընթացում: Իր հերթին քաղաքացիներին ընտրական գործընթաց հավաքագրող սոցիալականացման գործառույթն ապահովում է հասարակության քաղաքական համակարգի ժողովրդավարացումը՝ պետության և քաղաքացու միջև ստեղծելով համագործակցության եզրեր, որն էլ երաշխավորում է ժողովրդավարական կայունություն:

Հետևաբար, ՀՀ խորհրդարանական և նախագահական ընտրությունների ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ սոցիալական հիշողությունը ներառում է ոչ միայն իշխանության իրականացման *մշակութային,* այլև *բարոյական* և *մարդասիրական* նորմեր, որոնք քաղաքական համակարգի արդիականացման գործընթացում ենթադրում են ռացիոնալի և իռացիոնալի փոխներդաշնակում: Մինչդեռ ՀՀ իրականությունում անձը ընտրական գործընթացներին մասնակցում է զուգահեռաբար գործող և՛ ազատական, և՛ ավանդական, և՛ խմբային խառնածին մշակույթների միջավայրում, որտեղ գերակա է «խմբիշխանության երկաթյա օրենքը»: Ռ.Միխելսը (1876-1936) այն կարծիքին է եղել, որ կուսակցական կազմակերպության ղեկավար միջուկը, իր ձեռքում պահելով հասարակական հարաբերությունների ժողովրդավարացման շղթան, սկսում է զուգամիտել իր խմբային շահերը հանրային շահերի հետ՝ ցանկանալով քաղաքակրթել իշխանության իրականացման մեխանիզմները: Իսկ կուսակցության շարքային անդամները, հարմարվելով քաղաքական ժամանակի պահանջներին, ընդարձակում են «խմբիշխանության երկաթյա օրենքի» սոցիալական բազան [18, c. 132]: Ելակետ ընդունելով այս մոտեցումը՝ նշենք, որ կերպափոխվող հասարակություններում ընտրական գործընթացների կազմակերպման ժամանակ առաջացել է երկու հիմնախնդիր.

1. սոցիալական անկայունության և սոցիալականացման փուլերի միջև անհամաձայնությունը սահմանափակում է անհատի նույնականացման կայուն և վստահ զգացում գտնելու հեռանկարը, որի արդյունքում անհատն անընդհատ մարգինալ նույնականացման մեջ է,
2. նույնականացման այդ զգացումը թուլանում է, քանի որ պրոֆեսիոնալիզմը, մոտիվացիոն նպատակները և ասոցիատիվ զգացողությունն անհրաժեշտ աստիճանով չեն զարգանում:

Այդ հիմնախնդիրների արդյունքում ՀՀ-ում կազմակերպված ընտրություններն իրականացվում են խառնածին մշակութային տարածությունում՝ պահպանելով «խմբիշխանության երկաթյա օրենքը»: Այս ամենն էլ ՀՀ 2008թ. նախագահական ընտրությունների գործընթացում հնարավորություն տվեցին թեկնածուներին ընտրողների վարքաբանությունում ակտիվացնել մարգինալություն ծնող հետևյալ գործոնները.

1. *Նացիոնալիզմ և կոսմոպոլիտիզմ,* որոնք հանդես են գալիս որպես անհատի սոցիալական նույնականացման հիմնական պայման: ՀՀ-ում և՛ ազգայնական, և՛ կոսմոպոլիտ արժեքների տիրույթներում քարոզչություն ծավալած նախագահական թեկնածուները, օգտագործելով մարգինալ շերտերի անլիարժեքության բարդույթը, նրանց ներգրավեցին իրենց քաղաքական կուսակցությունների և շարժումների ուղեծրում (այս առումով իրար փոխլրացրին ՀՀ նախագահի թեկնածուներ Արտաշես Գեղամյանի «Արարման» նախընտրական ծրագիրը՝ հանուն ազգային միաբանության [19, էջ 164], Արթուր Բաղդասարյանի «Նոր Հայաստան, նոր հաջողություններ յուրաքանչյուրին» նախընտրական ծրագիրը՝ «Հայաստան, բաց արա քո աչքերը» կարգախոսով [20, էջ 32], Վահան Հովհաննիսյանի նախընտրական ծրագիրը... *Ազատ* քաղաքացիների *Արդար* երկիր կառուցելու ակնկալիքով [21, էջ 8])։
2. *Սոցիալական հովանավորչության պահանջմունքի աճ:* Բարեփոխիչ լիդերները բնակչության հիմնական զանգվածի և քաղաքական որոշումների ընդունման ոլորտի միջև, սոցիալական ներկայացուցչության (ընտրական համակարգ և շահերի խմբեր) համակարգի զուգամիտման պայմաններում, իրականացնում են յուրօրինակ հաղորդակցական գործառույթներ:
3. *Սոցիալական հիշողություն, այսինքն՝ ազգի պատմական փորձ:* ՀՀ սոցիալական հիշողությունն արտացոլում է հայկական մշակութային ոլորտի հարաբերական անկախությունը և համարվում է ժողովրդավարական ընտրությունների կազմակերպման առավել էական բաղադրիչներից մեկը: Դրսևորվելով մշակութային նորմերի միջոցով՝ այն իր դրոշմն է դրել դարերով ձևավորված այնպիսի նորմերի և արժեքների վրա, որոնք ամրագրված են լեզվում, գեղարվեստական գրականության մեջ, սովորույթներում, միֆամտածողությունում և սիմվոլիկայում: Փաստորեն, քաղաքական համակարգի ժողովրդավարացումը բնակչության ավանդույթների և սոցիալական հիշողության դեմ ուղղված պայքար չէ: Գաղտնիք չէ, որ ՀՀ-ում քաղաքական համակարգի կայացման առաջին փուլի արդյունքում (1990-1996) հայ հասարակությունն ընկղմվեց ճգնաժամերի մեջ, քանի որ մի կողմից՝ առաջին սերնդի «նոր ժողովրդավարների» ստեղծած «խմբիշխանության երկաթյա օրենքը» բացարձակացնում էր իրենց խմբային շահը, մյուս կողմից՝ քաղաքացիներն իրենց գիտակցության մակարդակով մերժում էին մտածողության բազմազանությունը և կողմնակից էին հնազանդության, ենթարկվելուն, մյուսներին ճնշելուն՝ հասարակությանը զրկելով պլյուրալիզմից և բնականոն արդիականանալու հնարավորությունից: Այս ճշմարտության իմացությամբ

էլ ՀՀ նախկին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը որպես «Տրոյական ձի» առաջադրվեց ՀՀ նախագահի թեկնածու: Որպես այդպիսին լինելով «ժողովրդավարություն» խաղի փայլուն գիտակ (խաղ, որն ընթանում է ոչ թե շախմատի, այլ բրիջի կանոններով) ՝ նա կարողացավ կանչ տալ ներքին և արտաքին այն բոլոր ուժերին, որոնք «խմբիշխանության երկաթյա օրենքի» պայմաններում մի կողմից՝ դժգոհ էին իրենց կարգավիճակից, մյուս կողմից՝ քաղաքական համակարգի ժողովրդավարացման այլընտրանքային ձևաչափեր էին մշակել՝ ցանկանալով բարձրացնել ժողովրդավարության որակը և ընդարձակել աշխարհաքաղաքական կողմնորոշումները [22, c. 25-36]: Եթե արտաքին ուժերը նետած մարտահրավերը ցանկացան օգտագործել իրենց աշխարհաքաղաքական շահերի հստակեցման տեսանկյունից, ապա պարբերաբար «սպասումների հիասթափություն» ապրող ներքին ուժերը, օգտագործելով տրված հնարավորությունը, հեղափոխականացրին իրենց վարքը: Հետևաբար, մանիպուլացնելով հայ հասարակության *սոցիալական ներկան* ՝ Լ.Տեր-Պետրոսյանը հստակեցրեց և ճշգրտեց իր և իր շրջապատի վերակենդանացման հնարավորությունները՝ օգտագործելով մարգինալ այն մասսաներին, որոնք իրենց արդարացված սոցիալական դժգոհությամբ առավել ընդգծեցին ընտրական գործընթացների ֆրագմենտացվածությունը:

ՀՀ նախագահի 9 թեկնածուներից յուրաքանչյուրը, առաջարկելով քաղաքական համակարգի ժողովրդավարացման իր ձևաչափը, կարծես թե անտեսեց միջազգային փորձը: *Մինչդեռ քաղաքական արդիականացման աֆրիկյան, լատինաամերիկյան, ԿԱԵ և ՆԽՄ փորձը «գունավոր հեղափոխությունների» բացառման նպատակով ընտրական գործընթացների միջոցով կերպափոխվող հասարակությունում քաղաքական համակարգի ժողովրդավարացման համար առաջարկում է երկու հիմնական ճանապարհ:*

Առաջին. *բարեփոխիչ լիդերների առկայություն,* որոնք իրենց հեղինակության շնորհիվ ընդունակ են ընտրազանգվածին համոզել նոր սերնդի բարեփոխումներ կատարելու իրենց մտադրությունների մասին՝ դուրս բերելով նրանց հեղափոխականացնող կոշտ կարգախոսներով հանդես եկող լիդերների ազդեցության տիրույթներից: Ներառելով լիդերության տարբեր տիպերից որոշակի հատկանիշներ՝ բարեփոխիչներն ընտրական քարոզարշավը կազմակերպելիս պետք է կիրառեն և՛ մենախոսության, և՛ երկխոսության մեթոդները, որոնց օգնությամբ էլ բարձրանում է նրանց իշխանության լեգիտիմության մակարդակը:

Երկրորդ. *նույնականացման բազմաչափություն,* որը ենթադրում է կառավարման ինստիտուցիոնալացման կարգի արդյունավետության բարձրա-

ցում և շարունակական բարեփոխումներ՝ հանուն ժողովրդավարության որակի: Նման մեխանիզմների ստեղծման համար անհրաժեշտ է ոչ միայն ռացիոնալացնել ՀՀ քաղաքացիների սոցիալական շարժունակությունը, այլև իրականացնել այնպիսի *PR* տեխնոլոգիաներ, որոնց օգնությամբ հնարավոր է ցույց տալ իշխանության նկատմամբ սեփական հավակնությունների հիմնավորվածությունը՝ հանուն նոր սերնդի բարեփոխումների, սոցիալական երկխոսության և սերունդների համերաշխության:

3. «Լավ կառավարումը» քաղաքական զարգացման ճգնաժամերի հաղթահարման և ժողովրդավարական համախմբման հաստատման համատեքստում

1990-ական թվականներից ՀՀ-ում իրականացված ազատականացման արդյունքում ծագած քաղաքական զարգացման առաջին ճգնաժամը բաշխման ճգնաժամն էր: Իրականացված առաջին սերնդի բարեփոխումների (1990-1996թթ.) հետևանքով «նոր ժողովրդավարների» առաջին սերունդը քաղաքական, տնտեսական և այլ արտոնություններ ստացավ, որն էլ ուղեկցվեց հասարակության վտանգավոր բևեռացումով: Վերջիններս էլ, միևնույն ժամանակ, արտոնություններ տվեցին բոլոր նրանց, ովքեր իրենց մարգինալ վարքաբանությամբ կայացվող որոշումների վրա ազդելու հնարավորություններ ստացան խմբիշխանական շահերի պաշտպանության տեսանկյունից: Արդյունքում՝ ոչ մարգինալ քաղաքական դերակատարների օտարվածությունը ծնեց *մասնակցության ճգնաժամ* կամ *մարգինալ-պոպուլիստական մասնակցություն:* Իսկ սոցիալական-քաղաքական-տնտեսական խմբերից հաճախակի դեգերումները, օտարվածությունը, սոցիալական շարժունակության անկումն առաջ բերեցին *շարժունակության ճգնաժամ:* Այդ վիճակում գտնվող ՀՀ քաղաքացիների համար «նոր ժողովրդավարների» առաջին սերնդի կողմից ներդրվող ազատական ժողովրդավարական արժեքները կորցրին իրենց նշանակությունը, ինչը հանգեցրեց հակասոցիալական վարքագծի աճի և թերահավատության հաստատված արժենորմատիվ համակարգի նկատմամբ՝ խորացնելով ֆրուստրացիան:

Հաստատված վարքի նոր ձևաչափերի, արժեքների նկատմամբ ձևավորված անվստահությունը հարուցեց *նույնականացման ճգնաժամ:* Այս գործոնի ազդեցության տակ ՀՀ քաղաքացիները կորցրին իրենց հավատն ու վստահությունը իշխանության նկատմամբ, իսկ քաղաքական իշխանությունն ընկղմվեց *լեգիտիմության ճգնաժամի* մեջ: Հարկ է նշել, որ այս ճգնաժամերը ոչ միայն պայմանավորեցին մեկը մյուսին, այլ նաև ընթացան և ընթանում են գրեթե միաժամանակ: Սոցիալական բևեռվածությունը, աղքատությունը, կոռուպցիան, իշխանության իրականացման ցածր մշակույթը նպաստավոր միջա-

վայր են ստեղծում զանգվածային մարգինալացման ոչ միայն առաջացման, այլև տրոհված և աններդաշնակ կորպորատիվիստական շահերի արտահայտման համար: Վերջիններիս հաղթահարման համար 1990-ականների վերջերին ՄԱԿ «Զարգացման ծրագրեր» փաստաթղթերում մշակվել են «լավ կառավարման» *(«good governance»)* հետևյալ սկզբունքները.

- *մասնակցություն.* բոլոր քաղաքացիներն ունեն ձայնի իրավունք՝ ընդունվող որոշմանը մասնակցելու, իշխանության լեգիտիմ ինստիտուտներ կազմակերպելու և կառուցողական երկխոսության համար,
- *իրավունքի գերակայություն.* հատկապես այն ինստիտուտների արդյունավետ և արդարադատ գործունեություն, որոնք ապահովում են մարդու իրավունքները,
- *թափանցիկություն.* բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են ստանալ որևէ տեղեկություն, տեղեկատվության ազատություն և մատչելիություն,
- *համագործակցություն.* բոլոր ինստիտուտներն արագ արձագանքում են քաղաքացիների պահանջներին՝ ցանկանալով ծավալել սոցիալական երկխոսություն,
- *արդարություն.* բոլոր քաղաքացիները հնարավորություն ունեն բարելավելու իրենց բարեկեցությունը,
- *արդյունք և գործ.* քաղաքացիների պահանջմունքների բավարարման համար ռեսուրսների արդյունավետ օգտագործում,
- *հաշվետվություն.* քաղաքական և բիզնես էլիտան, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ինստիտուտները հաշվետու են հասարակությանը և իրավունքի ինստիտուցիոնալ կրողներին,
- *ռազմավարական հեռատեսություն.* լիդերները, էլիտար տարաբնույթ խմբերը և հասարակությունը, պատասխանատվություն կրելով ժողովրդավարության որակի բարձրացման և կոնսոլիդացման հաստատման համար, հստակորեն մշակում են այն ուղիները, որոնք ուղղված են այդ խնդիրների իրականացմանը [23]:

Փաստորեն, «լավ կառավարումը» ենթադրում է, որ հասարակական կերպափոխումների գործընթացում քաղաքական զարգացման կարևորագույն ռեսուրսը այն մարդն է, որն ունի *այլընտրանքային մասնակցության և մրցակցության հնարավորություն:*

«Լավ կառավարման» ռազմավարական գերակայությունները դիտարկենք մասնակցության երեք մոտեցումների տեսանկյունից.

1. *Ռացիոնալ ընտրությունը ենթադրում է, որ մասնակցության գլխավոր դերակատարը իր շահերը հետապնդող և հանրային համակեցության սկզբունքները պահպանող ազատ անհատն է:*

2. *Մասնակցության խթանն* ունի *գաղափարախոսական, նորմատիվային և դերային* դրսևորումներ, որոնցից յուրաքանչյուրը յուրովի բարձրացնում է քաղաքացու քաղաքական գիտակցությունը:
3. *Գաղափարախոսական խթանն* ապահովում է անհատական և հասարակական արժեշահային համակարգի զուգամիտումը: *Նորմատիվային խթանը* կանոնակարգում է քաղաքացու վարքագիծը ժողովրդավարական արժեքներով՝ նպաստելով նրա ինքնաիրացմանը և ինքնադրսևորմանը: *Դերային խթանները* պայմանավորված են անձի սոցիալականացման արժեշահային բազմաչափությամբ: Երեքը միասին վերցրած որոշիչ դեր են խաղում միջին դասի ու բաց հավաքագրված կառավարող էլիտայի կայացման մեջ՝ որպես ժողովրդավարական համախմբման գաղափարախոսներ:

Սոցիալական գործոնների տեսանկյունից լավ կառավարման խնդիրն է մասնակցության մարգինալ-պոպուլիստական մոդելից ազատական մոդելի անցումը:

Մարգինալ պոպուլիստական մասնակցության մոդելը ՀՀ-ում իրականացվում է ոչ ինստիտուցիոնալացված, «խմբիշխանության երկաթյա օրենքի» սկզբունքների հիման վրա և հետամուտ է դերային մենաշնորհի պահպանմանը: Սա խոչընդոտում է ժողովրդավարական համախմբմանը՝ պարբերաբար հանգեցնելով անկայունության և անհանդուրժողականության: Արդյունքում՝ մարգինալ-պոպուլիստական մոդելի դերակատարները հեղափոխականացնում են հասարակության վարքը:

Հետևաբար, «լավ կառավարման» սկզբունքների ներդրումը մեծացնում է ՀՀ-ում մասնակցության ազատական մոդելի հաստատման հնարավորությունը: Բարձրացնելով կոռուպցիայի և աղքատության դեմ մղվող պայքարի արդյունավետությունը և ընդարձակելով ժողովրդավարական համախմբման ունիվերսալ տարածքը, այն ռեալ պայմաններ է ստեղծում քաղաքացիների ինքնաիրացման համար՝ նաև ապահովելով ՀՀ ինտեգրումն աշխատանքի միջազգային բաժանման նոր գործընթացին [24; 25, c. 2-12]: Վերջինս հնարավորություն կտա հայ մարդու համար մրցունակ գիտելիքը և կրթությունը դարձնել փոխհամաձայնեցված խմբիշխանության մենաշնորհի պայքարի դեմ հաղթանակի գրավական: Առաջարկվող մոդելի օգնությամբ ժողովրդավարական համախմբման սկզբունքների շուրջ կմիավորվեն բոլոր սոցիալական խավերը՝ ընդգրկվելով կոռուպցիայի և աղքատության դեմ մղվող պայքարի նպատակամետ գործընթացում, քանի որ այդ երևույթների խորացումը վտանգում է քաղաքացիական հասարակության ինստիտուցիոնալ հիմքերի ժողովրդավարացման գործընթացները [26]: Վերոբերյալի օգնությամբ էլ հենց

տարբերակվում է զարգացած և զարգացող հասարակություններում առկա մարգինալության՝ որպես համադրական երևույթի առկայությունը:

Եթե զարգացած հասարակություններում մարգինալությունը վերահսկելու և կանխելու համար օգտագործում են իրենց քաղաքական զարգացման փորձը, ապա զարգացող հասարակություններում մարգինալացման գործընթացներն ունեն ոչ միայն անկանխատեսելի ու անվերահսկելի, այլև շատ հաճախ՝ փոխհամաձայնեցված խմբիշխանական խմբերի կողմից նպատակամետ ուղղորդված բնույթ: Այս ընդհանրացման համար ելակետային է Ե.Ստարիկովի հետևյալ մոտեցումը. «Հետամբողջատիրական հասարակության սոցիալական կառուցվածքում գործնականում մարգինալացվում են սոցիալական բոլոր խմբերը, որի հետևանքով ջնջվում են մարգինալի և ոչ մարգինալի միջև եղած տարբերությունները» [27]: Այս տեսակետը վիճելի է, քանի որ մարգինալությունը, ճիշտ է, մի կողմից ենթադրում է շարժունակության առկայություն, սակայն երբ այդ շարժունակությունը գլխապտույտ արագությամբ հանգեցնում է հասարակական «Ես»-ի կորստի՝ արմատապես խաթարելով նրա արժեշահային համակարգը, ապա առաջացած սոցիալական բևեռվածության պատճառով բնակչության մեծամասնությունը դառնում է մարգինալ զանգված, որի օգնությամբ «մարգինալ իրավիճակը» հեշտությամբ կարող է վերաճել հեղափոխության [28, p. 52-58; 29, p. 57]: Ենթադրվում է, որ նմանօրինակ հեղափոխության կրողները, շահարկելով «ոչ լավ կառավարման» առկայությունը, անցնում են կոշտ ընդդիմության դիրքերը՝ ցանկանալով իրենց համար իշխանություն ապահովել ոչ միայն ընտրությունների միջոցով, այլև, անկախ ընտրության ելքից, գնալ ռևանշի: Այս համատեքստում կերպափոխվող հասարակությունների հեղափոխականացված քաղաքական գործընթացներում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում ոչ միայն մարգինալները, որոնք ձևավորվել են «նոր ժողովրդավարների» առաջին սերնդի իրականացված բարեփոխումների արդյունքում, այլև երիտասարդությունը: Ցանկանալով ինքնահաստատվել, ունենալով սեփական արժեշահային համակարգ՝ երիտասարդները, որպես ժողովրդավարական համախմբման ջատագովներ, տարբեր ձևերով են օգտագործում մարգինալ իրականությունը: Չունենալով բարդույթներ՝ երիտասարդները, շնորհիվ իրենց մրցունակ գիտելիքների, նորագույն կրթության, էներգիայի, եռանդի և նվազ կաղապարվածության, արագորեն յուրացնում են հարահոս փոփոխվող խաղի կանոնները՝ հեշտությամբ ստանձնելով «նոր ժողովրդավարների» երկրորդ սերնդի դերը, ցանկանում են փոխել քաղաքական իրականությունը *«գունավոր հեղափոխությունների»* միջոցով: Եթե վարքի միասնական մոտիվացիա և արժեշահային համակարգ ունեցող զարգացած հասարակության համար հեղափոխության հնարավորությունը նվազագույնի է հասցված, ապա կերպափոխվող հասարակությունն-

րում, որտեղ *անցյալի իդեալականացումը, անոմիան և ֆրուստրացիան* սովորական վիճակ են, երիտասարդության ներառվածությունը այդպիսի գործընթացների մեջ տարածված սոցիական երևույթ է: Դիցուք՝ Վրաստանի երկրորդ սերնդի «նոր ժողովրդավարները», օգտագործելով քաղաքական զարգացման ճգնաժամերի արդյունքում սոցիալական խմբերի դժգոհությունը, իրականացրին «վարդերի հեղափոխություն»՝ ստանալով վրացական «Կմառա» երիտասարդական շարժման աջակցությունը: Որպես կանոն, «գունավոր հեղափոխությունների» գլխավոր դերակատար երիտասարդությունն օգտագործում է մարգինալ մարդկանց, իր ինքնահաստատման, ինքնաիրացման ձև ընտրելով պայքարը՝ հանուն ժողովրդավարական համախմբման: Այս ամենն էլ հնարավորություն է տալիս «նոր ժողովրդավարների» երկրորդ սերնդին սեփական մարգինալների հանդեպ խուսափել բարոյական և իրավական խիստ պատժամիջոցներ կիրառելուց, քանի որ նրանք հստակեցված դերակատարում ունեն կանխավ ծրագրավորված հեղափոխության մեջ: Քաղաքական գործընթացների կազմակերպման այս տեխնոլոգիաների իմացությամբ էլ կերպափոխվող Ուկրաինայում, Վրաստանում և Ղրղզստանում կազմակերպվեցին «գունավոր հեղափոխություններ» [30]:

Ամփոփենք. ՀՀ քաղաքական համակարգի ժողովրդավարացման գործընթացում ձևավորված մարգինալությունը համադրական էություն և բնույթ ունի, որոնք քաղաքական զարգացման ճգնաժամերի պայմաններում հեղափոխականացնում են ամբողջ հասարակության վարքը: Հետևաբար, ժողովրդավարական համախմբումը հնարավորություն կտա հաղթահարել և կառավարելի դարձնել համադրական մարգինալությունը, որի նպատակով քաղաքական համակարգի բոլոր ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտները, «գունավոր հեղափոխությունները» բացառելու նկատառումներով, պետք է իրականացնեն սոցիալական երկխոսության, սերունդների համերաշխության, ժողովրդավարական կայունության քաղաքականություն՝ իրականացնելով շարունակական բարեփոխումներ:

Հունիս, 2008թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Park R.,* Human migration and marginal man / American Journal of Sociology. Chicago, 1928, vol. 23, N 6.
2. *Stonequist E.V.,* The marginal man. A study in Personality and Culture Conflict. N. Y., 1961.
3. *Меркель В., Круассан А.,* Формальные и неформальные институты в дефектных демократиях, Полис, N 1, 2. 2002.
4. *Ларсен С., Херсвик Я.,* Крушение и воостановление демократического режима в Португалии (Опыт применения теории игр к анализу исторических событий), Полис, N 2, 3. 2004.

5. *Park R.,* Race of culture. Glance, Free press, 1950, part 26.
6. *Шибутани Т.,* Социальная психология, М., Мир, 2002.
7. *Manchini B.J.,* No owner of soil: The concept of marginality revisited on its sixtieth birthday, International review of modern sociology. New Delhi, 1998, vol. 18.
8. *Ольшанский Д.В.,* Политическая психология, СПб., Питер, 2002.
9. *Стариков Е.,* Маргиналы // В человеческом измерении, М., 1989; *Стариков Е.,* Маргиналы и маргинальность в советском обществе // Рабочий класс и соврем. мир. 1989., N 2 (4).
10. *Сорокин П.А.*, Социальная и культурная динамика // Пер. с англ. В. Сапова, М., Астрель, 2006.
11. *Белл Даниел,* Грядущее постиндустриальное общество. Опыт социального прогнозирования, М., Academia, 1999.
12. *Шеффер Г.,* Диаспоры в мировой политике, Диаспоры, N 1, 2003.
13. *Мылников М.А.,* Современные диаспоры в глобальном коммуникационном пространстве. Вестник Московского университета (социология и политология, серия 18). Научный журнал, N 2, 2007.
14. *Хантингтон С.,* Политический порядок в меняющихся обществах, М., 2004.
15. *Рюэль Я.,* Случайность и хаос, Ижевск, 2001.
16. *Рашковский Е.,* Маргиналы // 50/50. Опыт словаря нового мышления, М., 1989.
17. *Даль Р.,* Демократия и ее критики, М., Российская политическая энциклопедия (РОССПЭН), 2003.
18. *Михельс Р.,* Социология политической партии в условиях демократии // Антология мировой политической мысли, Т.2, М., 1997.
19. *Գեղամյան Ա.,* Հայաստան 2008. Արարման ծրագիր, Եր., 2008:
20. *Բաղդասարյան Ա.,* Հայաստան, բաց արա քո աչքերը, Եր., 2008:
21. *Հովհաննիսյան Վ.,* Մեր հին ընկերը երկրի նոր նախագահ, Եր., 2008:
22. *Оуэн Г.,* Теория игр, М., Изд. ЛКИ, 2007.
23. *Good Governance* and Sustainable Human Development.- Governance for Sustainable Human Development. A UNDP Policy Document (www.magnet.undp.org). UNDP, 2002.
24. Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիր (ՀՀ կառավարության որոշումն ընդունվել է 2003թ. նոյեմբերի 6-ին):
25. *Коктыш К.Е.,* Социокультурные рамки институционализации политических практик и типы общественного развития, Полис, N 4, N 5, 2002.
26. *Transparency International's* Corruption Perception Index, 2007. (www.transparency.org/documents/cpi/2007)
27. *Стариков. Е.,* Социальная структура переходного общества /опыт инвентаризации/, Полис, 1994, N 4.
28. *Goldberg M.,* Qualification of the Marginal Theory. American Sociological Review. 1941, vol.6, N 1.
29. *Antonovsky A.,* Toward a Refinement of the "Marginal Man" Concept. Social Forces. 1956, vol. 35, N 1.
30. *Кто делает цветные революции*? – www.google.ru

МАРГИНАЛИЗАЦИЯ В ПРОЦЕССЕ ДЕМОКРАТИЗАЦИИ ПОЛИТИЧЕСКОЙ СИСТЕМЫ. «ЦВЕТНЫЕ РЕВОЛЮЦИИ»

Мариам Маргарян
Араксия Мурадян

Резюме

Логика «третьей волны» демократизации предполагает, что выборные процессы в РА должны изучаться при помощи научно-аналитической парадигмы «переход-консолидация». Последняя позволит повысить уровень демократии, предотвратив «цветные революции», являющиеся результатом развития политических кризисов. Рассмотрены подходы основателей теории маргинализации Р.Парка, Б.Манчини, Э.Стоунквиста, согласно которым маргинализация постоянно сопутствует разным обществам, социальным группам, этническим объединениям в процессе их политического развития. Рассматривая маргинализацию как синтетическое явление, за исходную точку было принято то обстоятельство, что «маргинальный человек» является социальным субъектом и как таковой сталкивается с необходимостью стать гражданином. Высказывается мнение о том, что маргинализация является результатом слабовыраженного диалога между социальными группами носителей традиционных, модернистских и постмодернистких ценностей, низкой культуры деятельности властей и отсутствия демократической консолидации.

Каждое общество по-своему отвечает на вызовы политического развития посредством института выборов, соответствующих его ценностной системе и политическому сознанию. Выборы создают для индивида возможности, в одном случае, самоопределиться (человек самоопределившийся), в другом – маргинализироваться (маргинал). В этом аспекте в РА необходимо повысить эффективность процесса политической социализации личности. Иначе любые выборы в РА периодически будут подвергаться «железному закону кланово-сти» (Р.Михельс), порождая предпосылки «цветной революции». В целях сохранения политической стабильности и соблюдения национальной безопасности предлагается демократизировать политическую систему РА при помощи лидеров-реформаторов нового поколения и идентификационной многомерности. Рассматривая принципы «хорошего управления» (*good governance*), сделан вывод о важности имплементации либеральной модели участия в выборных процессах. Желая самоутвердиться, обладая собственной системой ценностей, молодежь, как сторонница демократической консолидации, по-разному использует маргинальную действительность. Не имея комплексов, молодежь быстро усваивает меняющиеся правила игры под названием «демократия», играя роль второго поколения «новых демократов».